ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Բալասանյան Խաչատուր Սամվելի

Իրավունքի գործառույթները ժողովրդավարական իրավական պետությունում. տեսական-իրավական վերլուծություն

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2017

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

Баласанян Хачатур Самвелович

Функции права в демократическом правовом государстве: теоретико-правовой анализ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 -"Теория и история государства и права, история государственных и правовых учений"

Ереван - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտխորհրդում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ.Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ.Գ. Պետրոսյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու **Հ.Զ.Սարգսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. ապրիլի 11-ին, ժամը 17^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհուրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին փ., 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2017թ. մարտի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանության գիտությունների թեկնածու՝ **Ջ.Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена на заседании Ученого совета Института философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Сафарян Г.Г.**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Петросян Р.Г.**
кандидат юридических наук **Саргсян О.З.**

Ведущая организация: **Академия образовательного комплекса Полиции РА**

Защита состоится 11 апреля 2017г. в 17^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (г.Ереван, 0051, Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 11 марта 2017г.

Ученый секретарь специализированного совета кандидат юридических наук **Дж.А. Айрапетян**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը. Վերջին տարիներին իրավունքի գործառույթների հիմնախնդիրը դարձել է իրավագիտության մեջ ամենաքննարկվողն ու ուսումնասիրվողը, ինչը վկայում է հիմնախնդրի տեսական և գործնական նշանակության մասին: Իրավունքի գործառույթների դերն ու նշանակությունը իրավակարգավորումների ոլորտում առավել կարևորվում է մեզանում իրականացված սահմանադրական բարեփոխումների համատեքստում:

Իրավունքի գործառույթների համալիր հետազոտությունը արդիական է և զգալի նշանակություն ունի նաև այն պատճառով, որ իրավունքը և նրա գործառույթները իմաստավորվում են հասարակական իրավագիտակցության մեջ որպես սոցիալ-տնտեսական հարաբերությունները կարգավորող օպտիմալ և արդյունավետ նորմատիվ կարգավորիչներ:

Բացի վերոնշվածից, թեմայի հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև նրանում, որ իրավակարգավորման արդյունավետությունը կախված է նաև իրավունքի գործառույթների հստակ և օպտիմալ գործադրմամբ: Իրավունքի հիմնական գործառույթներով (կարգավորվող և պահպանիչ) մեծամասամբ պայմանավորվում է ոչ միայն իրավակարգավորումների արդյունավետությունը, այլև օրինականության պահպանումը և իրավակարգի ամրապնդումը:

Վերոնշվածով է պայմանավորված թեմայի գիտական հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական ուսումնասիրության վիճակը. Սույն ատենախոսական աշխատանքի թեման հայրենական իրավագիտության մեջ ուսումնասիրման առարկան է դարձել հիմնականում դասագրքերում[1]: Քննարկվող թեման ավելի խորն է ուսումնասիրվել խորհրդային և ռուսական իրավաբանական գրականության մեջ[2]:

Սակայն, իրավունքի գործառույթների խնդիրը, անկախ դրա ուսումնասիրության խորությունից դեռևս համակարգային լուսաբանում չի

---

[1] Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. Խմբ. **Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան:** Երևան, 2014, էջ 178-291 **(հեղինակ՝ Մ.Մուրադյան)**, **Վաղարշյան Ա.Գ.** Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություններ: Երևան, 2011, էջ 64-66:

[2] Տե՛ս ռուս գիտնականների աշխատությունները ատենախոսության գրականության ցանկում:

ստացել իրավաբանական գրականության մեջ: Դրա առանձին տարրերը դիտարկված են հոդվածներում, ուսումնական դասընթացների բաժիններում, իրավունքի կոնկրետ գործառույթների ուսումնասիրություններում: Այդ պատճառով էլ շատ խնդիրներ դեռևս մնում են չլուծված, իսկ մի մասն էլ՝ ընդհանրապես առանց քննարկման:

Այս առումով, սույն հետազոտությունը որոշակիորեն լրացնում է այդ բացը և ճանապարհ հարթում հետագա հետազոտությունների համար:

Հետազոտության օբյեկտն է իրավունքի գործառույթների համալիր և համակարգված հետազոտությունը:

Հետազոտության առարկան է իրավունքի գործառույթների էության, հասկացության, դասակարգման հետ կապված հիմնախնդիրների համակողմանի վերլուծությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն ատենախոսական աշխատանքի նպատակն է ժամանակակից իրավագիտության նվաճումների և իրավական պրակտիկայի վերլուծության հիման վրա իրականացնել համակարգված հետազոտություն՝ իրավունքի գործառույթների էության և բովանդակության բացահայտման համար:

Դրված նպատակին հետամուտ, հեղինակը փորձել է լուծել հետևյալ խնդիրները.

- ներկայացնել իրավունքի գործառույթների հետազոտման տեսական, մեթոդաբանական և իմացաբանական առումները,
- բացահայտել իրավունքի գործառույթների էությունը, հասկացությունը և առանձնահատկությունները,
- վերլուծել իրավունքի գործառույթների գիտական դասակարգման չափորոշիչները,
- առանձնացնել իրավունքի հիմնական և ոչ հիմնական (օժանդակ) գործառույթների բնութագրական հատկանիշները, դրանց սոցիալական նշանակությունը,
- վեր հանել և արժևորել իրավունքի գործառույթների դերն ու նշանակությունը իրավակարգավորումների գործընթացում:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Սույն ատենախոսական աշխատանքի ընթացքում հեղինակն օգտագործել է ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդները:

Որպես ընդհանուր գիտական մեթոդ օգտագործվել է համընդհանուր դիալեկտիկական մեթոդը, իսկ որպես մասնավոր-հատուկ մեթոդներ՝ կիրառվել են ձևական իրավաբանական վերլուծության, համակարգային-կառուցվածքային վերլուծության և իրավահամեմատական մեթոդները:

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել հայրենական, խորհրդային և ռուս գիտնականների՝ Հ.Մ. Ստեփանյանի, Գ.Հ. Սաֆարյանի, Ա.Գ. Վաղարշյանի, Ս.Ս. Ալեքսեևի, Մ. Ի. Բայտինի, Վ. Դ. Գրաֆսկիի, Դ.Ա. Քերիմովի, Ի. Յու. Կոչլիխինի, Վ.Վ. Լազարևի, Ռ.Զ. Լիվշիցի, Ե.Ա. Լուկաշևայի, Գ.Վ. Մալցևի, Մ.Ն. Մարչենկոյի, Վ.Ս. Ներսեսյանցի, Վ.Դ. Սորոկինի, Ի.Ն. Չեստնովի և այլոց աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմում ՀՀ փոփոխված Սահմանադրությունը և գործող օրենսդրությունը:

Հետազոտության գիտական նորույթը, ամենից առաջ, նրանում է, որ հեղինակը համակարգված և համալիր վերլուծության է ենթարկել իրավունքի գործառույթների էությունը, բովանդակությունը, հիմնավորել է դրանց գիտական դասակարգման չափորոշիչները և նման դասակարգման տեսական և կիրառական նշանակությունը՝ իրավակարգավորումների արդյունավետության բարձրացման խնդրում:

Այս առումով սույն ատենախոսական աշխատանքում հեղինակը.

- բացահայտել է իրավական գործառույթների էությունը, առանձնահատկությունները և սոցիալական նշանակությունը իրավակարգավորումների ոլորտում,
- իրավունքի գործառույթների դասակարգման հիմքում դրել է հեղինակային չափորոշիչները և մոտեցումները,
- արժեբանության տեսանկյունից գնահատվել և արժևորվել է իրավունքի հիմնական և ոչ հիմնական գործառույթների դերն ու նշանակությունը՝ օրինականության և իրավակարգի պահպանման գործընթացում:

Գիտական նորույթի տարրեր են պարունակվում նաև **պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում.**

1. Իրավունքի գործառույթները անմիջականորեն կապված են իրավունքի ներգործության, իրավունքի սուբյեկտների միջև հարաբերությունների պաշտոնական-իշխանական կարգավորման, հասարակության իրավական համակարգում դրա տեղի և դերի հետ: Իրավունքի գործառույթներում բացահայտվում են իրավունքի համամարդկային և դասակարգային էությունը (բնույթը) և դրա սոցիալական նշանակությունը՝ արժևորումը, նպատակը և ծառայողական դերը:

2. Իրավունքի սուբյեկտների միջև տարբեր հարաբերությունների վրա իրավունքի ազդեցության բազմաձևությունը պայմանավորված է իրավունքի գործառույթների բազմության առկայությամբ, որի արդյունքում կարևոր գործնական-գիտական նշանակություն է ձեռք բերում վերջիններիս դասակարգման վերաբերյալ հարցը: Անհրաժեշտ է առանձնացնել իրավունքի հիմնական (հատուկ) և երկրորդական (օժանդակ) գործառույթները, ինչպես նաև տարբեր ճյուղերի իրավական ինստիտուտների և առանձին նորմերի գործառույթները:

3. Իրավունքի հիմնական (հատուկ) և օժանդակ գործառույթների տարբերակման համար, ծառայում է երկտարրային չափանիշը, որը ներառում է հասարակական հարաբերությունների վրա իրավունքի ազդեցության երկու կողմերը՝ դրա բնույթը և նպատակը:

Խոսելով տվյալ չափորոշչի առաջին կողմի՝ իրավունքի ազդեցության բնույթի վերաբերյալ, անհրաժեշտ է հստակորեն միմյանցից տարբերակել օրգանապես փոխկապակցված, սակայն ոչ լիարժեքորեն համընկնող «իրավունքի ներգործության» և «իրավական կարգավորում» հասկացությունները:

Առաջին հասկացությունը ընդարձակ է ըստ ծավալի և իր մեջ ներառում է իրավական կարգավորումը որպես իրավահարաբերության սուբյեկտների վրա իրավունքի ազդեցությունը հատուկ նորմատիվ-իրավաբանական միջոցներով (իրավական նորմեր, իրավունքի աղբյուրներ, իրավունակություն, գործունակություն, իրավասուբյեկտիվություն, իրավունքի կիրառության ակտեր և այլ իրավաբանական փաստեր, իրավահարաբերություններ, կողմերի

իրավունքներ և պարտականություններ, իրավաբանական պատասխանատվություն և այլն), երկրորդը՝ ընդհանուր սոցիալական, հոգևոր, մշակույթային, դաստիարակչական և այլ ազդեցություններ, որոնք բնորոշ են բարոյականությանը, գիտությանը, արվեստին և ցանկացած այլ կարգավորիչ երևույթներին, այդ թվում նաև իրավունքին (իրավագիտակցություն, իրավական մշակույթ, իրավական դաստիարակություն և այլն): Հետևաբար իրավական կարգավորումը իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների վրա իրավական ազդեցության հիմնական կարևոր հատվածը:

4. Հասարակական հարաբերությունների վրա ըստ ներգործության բնույթի առաջին պլանում իրավունքի որպես հատուկ նորմատիվային համակարգի գոյության իմաստը սահմանող հանդես է գալիս իրավական կարգավորման գործառույթը, որն անվանվում է կարգավորիչ: Տվյալ գործառույթի ազդեցության շնորհիվ (ստատիկ, դինամիկ, պաշտպանական), գործնականում մարմնավորում է իրավունքի երեք հիմնական իրավաբանական գործառույթներում, որոնք տարածվում են գործող իրավունքի համակարգի վրա՝ կարգավորիչ-ստատիկ, կարգավորիչ-դինամիկ և կարգավորիչ-պաշտպանիչ գործառույթներ:

5. Իրավունքի կարգավորիչ-ստատիկ գործառույթը կողմնորոշված է համապատասխան նորմերում և իրավական ինստիտուտներում նրա ամրագրմանը, որն իրականում ձեռք է բերվում և կազմում է հասարակության և պետության տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային հարաբերությունների նորմատիվ-կարգավորիչ հիմք: Կարգավորիչ-ստատիկ գործառույթի բովանդակությունը ընդգրկում է մասնավորապես, սահմանադրական կարգի հիմունքների, սեփականության ձևերի և դրանց պաշտպանության, քաղաքացիների իրավական դրության կարգավորման, կառավարման և պետական կառուցվածքի ձևերի, քաղաքական ռեժիմի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման կարգի և իրավասությունների, իրավունքի տարբեր ճյուղերի հիմունքների ամրագրումը:

6. Իրավունքի կարգավորիչ-դինամիկ գործառույթը կողմնորոշված է առաջադրված նպատակների, որոշակի պլանավորված արդյունքի ձեռքբերման գործընթացի ապահովմանը: Այստեղ իրավունքի ազդեցությունը արտահայտվում է մարդկանց միջև հարաբերությունների վրա, որոնք գտնվում են շարժման մեջ, դինամիկայում: Այն ուղղված է գոյություն ունեցող, ինչպես նաև նոր

հասարակական հարաբերությունների ծագմանը, զարգացմանը, փոփոխությանը և կատարելագործմանը: Առավել դիտարկելի տվյալ գործառույթն իր արտահայտումն է ստանում վարչական, ֆինանսական, հարկային, քաղաքացիական, աշխատանքային, էկոլոգիական իրավունքի նորմերում և ինստիտուտներում:

7. Ի տարբերություն իրավունքի դիտարկված երկու հիմնական գործառույթների, որոնք իրականացնում են պոզիտիվ-իրավական կարգավորում, գոյություն ունի նաև իրավունքի երրորդ հիմնական գործառույթ՝ կարգավորիչ-պաշտանիչ, որը տարբերվում է առաջին երկուսից նրանով, որ հանդիսանում է նեգատիվ կարգավորման գործառույթ: Այն կողմնորոշված է կարգավորիչ-ստատիկ և կարգավորիչ-դինամիկ գործառույթների նորմատիվ իրականացման ապահովմանը, իրավունքի պաշտպանության հնարավոր խախտումներից:

8. Իրավունքի գործառույթների ընդհանուր բնութագրիչն է, որ դրանք (գործառույթները) անմիջականորեն կամ միջնորդված եղանակով արտահայտում են իրավունքի էությունը և նրա սոցիալական նշանակությունը:

Իրավունքի գործառույթն ունի արտահայտման արտաքին և ներքին ուղղություններ: Արտաքին ուղղվածությունը (ձևը) իրավունքի գործառույթների արտահայտման «տեսանելի», «շոշափելի» կողմերն են, օրինակ՝ դատավարություն, օրենսդրական ընթացակարգ, իրավակիրառ գործունեություն, պայմանագիր և այլն: Սակայն իրավունքի էությունը, բովանդակությունը և սոցիալական նշանակությունը գիտակցելու, իմաստավորելու համար առավել կարևորվում է իրավունքի գործառույթների ներքին կողմը, այսինքն՝ կազմակերպման միջոցները, գործադրման եղանակները:

9. Գործառույթը՝ իրավունքի առանձնահատուկ հատկությունների արտահայտումն է: Գործառույթում կենտրոնացվում են իրավունքի այնպիսի հատկանիշներ, որոնք բխում են դրա որակական ինքնուրույնությունից, այլ ոչ ընդհանրապես ցանկացած հատկանիշները, որոնք բնորոշ են ոչ միայն իրավունքին, այլ սոցիալական կարգավորման մեխանիզմի այլ հատվածներին: Հատկապես այս հանգամանքի հաշվառումը հնարավորություն է տալիս հետագայում իրավունքի գործառույթի դասակարգման ժամանակ առանձնացնել իրավական գործառույթները, որոնք բնութագրում են սոցիալական կարգավորման համակարգում իրավունքը՝ որպես որակապես ինքնուրույն

միավոր:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքների հիման վրա ձևավորված տեսական դրույթները և եզրահանգումները որոշակիորեն կզարգացնեն իրավունքի տեսության համապատասխան բաժինները, ինչպես նաև ստացված արդյունքները կարող են օգտագործվել հետագա հետազոտողների կողմից՝ իրենց գիտական ուսումնասիրությունների գործընթացում:

Հետազոտության գործնական նշանակությունը նրանում է, որ աշխատանքում ձևակերպված հիմնարար դրույթները կարող են օգտագործվել իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացներում, ինչպես նաև ուսումնական դասընթացների ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը: Սույն ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ իրականացվել է աշխատանքի քննարկումը և գրախոսությունը:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

Աշխատանքի կառուցվածքը: Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են յոթ ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի համառոտ բովանդակությունը

Ներածական մասում հիմնավորվում է թեմայի հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ «Իրավունքի գործառույթների ուսումնասիրության մեթոդաբանական և իմացաբանական ասպեկտները» վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Իրավագիտության զարգացման ժամանակակից փուլում իրավունքի գործառույթների ուսումնասիրության**

որոշ առանձնահատկությունները» վերնագրով, հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել իրավունքի գործառույթների ուսումնասիրության առանձնահատկությունները արդի իրավագիտության տեսանկյունից:

Իրավագիտության կարևորագույն խնդիրներից է գիտականորեն հիմնավորված հանձնարարականների և առաջարկությունների մշակումը, որոնք անհրաժեշտ են իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների, պատշաճ արդյունավետ իրավական կարգավորումն ապահովելու համար: Իրավական կարգավորման արդյունավետության գիտական հիմնավորվածությունը կարող է ձեռք բերվել պետահիրավական երևույթների համակարգային վերլուծության, կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների էության ճիշտ սահմանման, այդ հարաբերությունների ներքին խորը կապերի, միտումների ճանաչման, իրավունքի գործողության սոցիալական արդյունքների կանխատեսման հիման վրա:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթալխում՝ **«Իրավունքի գործառույթների համընդհանուր ճանաչողության մեթոդը»** վերնագրով հեղինակը կարևորում է իրավունքի գործառույթների համընդհանուր ճանաչողության մեթոդի դերն ու նշանակությունը իրավակարգավորումների ոլորտում:

Իրավաբանական գիտության ոլորտում կատարվող ուսումնասիրությունների խորացման ու արդիական իրավական խնդիրների մշակման կարևորագույն պայմաններից մեկն է իրավագիտության մեթոդաբանական հիմքերի կատարելագործումը և դրա հետագա զարգացումը:

Իրավունքի գործառույթի ճանաչողության գործառույթը հայտնի աստիճանով մեթոդաբանական խնդիր է: Նման տեսակ խնդիրները մտնում են իրավաբանական գիտության մեթոդաբանական բաղկացուցչի, դրա տեսական-ճանաչողական հիմքերի մեջ:

Իրավունքի գործառույթի ուսումնասիրությունը շարժման, զարգացման մեջ, թույլ է տալիս բացահայտել իրավական համակարգի գործունեության իրական պատկերը, դրանում բացահայտել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում հասարակական հարաբերություններում, և որոնց վրա կոչված է ազդեցություն գործել իրավունքը:

Իրավունքի գործառույթի զարգացման, փոփոխության մեջ արտահայտվում

են դրանց դինամիկ հատկանիշները: Ընդ որում այդ գործընթացի դինամիկան պետք է չափվի ոչ միայն իրավաբանական, այլև սոցիալական «սանդղակով», հասարակական հարաբերությունների այն սանդղակով, որոնք փոփոխությունների են հանգեցնում նաև իրավունքի գործառույթներում:

Աշխատանքի առաջին գլխի երրորդ ենթալխում՝ **«Իրավունքի գործառույթների հետազոտության գիտական մեթոդաբանության հիմնախնդիրը»** վերտառությամբ հեղինակը քննարկում է իրավունքի գործառույթների հետազոտության գիտական մեթոդաբանության խնդիրները:

Իրավունքի համար բնութագրական է խորը կապը տնտեսության, պետության, քաղաքականության, իրավագիտակցության, բարոյականության հետ և այլն: Դրա համար էլ գործունեության բազմակողմանի ուսումնասիրությունը պետք է ներառի ոչ միայն զուտ իրավունքի իրավաբանական գործառույթները, այլև դրա սոցիալական գործառույթները՝ տնտեսական, քաղաքական և դաստիարակչական: Հետևաբար առանց սոցիալական գործառույթների խորը ուսումնասիրության դժվար է հետևել իրավունքի նորմերի փոխգործակցության ձևերը տնտեսության, մարդկանց գիտակցության, բարոյականության հետ, ինչպես նաև անհնար է նկարագրել դրանց փոխազդեցության, փոխկախվածության ուղիների լայն համալիրը և դրանով հանդերձ բավականին լիարժեք բնութագրել իրավունքի ֆունկցիոնալ դերը հասարակության մեջ:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Իրավունքի գործառույթների հասկացությունը, սոցիալական նշանակությունը և դասակարգման չափորոշիչները»** վերնագրով, բաղկացած է երկու ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Իրավունքի գործառույթների հասկացությունը և սոցիալական նշանակությունը»** վերնագրով, բացահայտվում է իրավունքի գործառույթների հասկացության սահմանումը և սոցիալական նշանակությունը:

Իրավունքի էությունը և սոցիալական նշանակությունը դրսևորվում է իրավունքի գործառույթներում (ֆունկցիաներում): Իրավունքի գործառույթները հասարակական հարաբերությունների, մարդկանց վարքագծի վրա՝ դրանք կարգավորելու նպատակով իրավունքի անընդհատ և շարունակական ազդեցության հիմնական ուղղություններն են, որոնք ընդհանրացված կերպով

բնութագրում են իրավունքի դերը հասարակական կյանքում: Իրավունքի գործառույթավորումը հասարակական կյանքում իրավունքի գործողությունն է, նրա կենսագործումը հասարակական հարաբերություններում:

Իրավունքի սոցիալական նշանակության գերակայող դերը ազդեցության հիմնական ուղղությունների նկատմամբ, կայանում է նրանում, որ այն սահմանում է գլխավոր, արմատական, պատմական խնդիրները: Դրանք ոչ թե կոնկրետ, ժամանակավոր, ընթացիկ խնդիրներ են, այլ խնդիրներ, որոնք ունեն համընդհանուր, համալիր հեռանկարային և մշտական բնույթ, որպես կանոն առկա են հասարակության զարգացման ամբողջ փուլում:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի գործառույթների դասակարգման չափորոշիչները»** վերնագրով, համակողմանի վերլուծության է ենթարկվում իրավունքի գործառույթների չափորոշիչները:

Գրականության քննական վերլուծությունը, որում դիտարկվում է իրավունքի գործառույթները, ցույց է տալիս, որ դրանց դասակարգման չափորշիչները կարող են տարբեր լինել: Բացահայտորեն ակնհայտ է, որ իրավունքը ունի գլխավոր և երկրորդային հատկություններ, առաջին, երկրորդ և երրորդ կարգի հատկանիշներ և այլն, օրինակ հայտնի են իրավունքի հասարակական հարաբերությունները ամրագրելու, դրանց զարգացմանը նպաստելու, հասարակական հարաբերությունների մասնակիցներին թույլատրելի վարքագծային տարբերակների վերագրման, գործունեության որոշակի ձևի արգելման, իշխանությունում կանգնած քաղաքական ուժերի գաղափարախոսության ոգով հասարակության անդամների դաստիարակության հատկությունը և այլն:

Իրավունքի հիմնական գործառույթները՝ հասարակական հարաբերությունների վրա վերջինների ազդեցության առավել ընդհանուր, գլոբալ ուղղություններն են: Դրանցում արտահայտվում է իրավունքի ծառայողական դերը, դրա սոցիալական և դասակարգային էությունը, համասոցիալական նշանակությունը:

Իրավունքի ոչ հիմնական գործառույթները, ինչպես նաև ընդհանուր ճյուղային գործառույթները ընդգրկում են ազդեցության նվազ կարևորության ոլորտ, դրանք հավասար աստիճանով բնորոշ չեն իրավունքի ամբողջ ճյուղերի համար: Մեծամասամբ դրանք իրավունքի հիմնական գործառույթի արդյունքներ

են: Ոչ հիմնական գործառույթի բնութագրող հատկանիշներ հանդիսանում են իրավունքի ճյուղերի մեծամասնության կամ ամբողջի նկատմամբ համընդհանրության բացակայությունը, իրավունքի ազդեցության տակ առնված հասարակական հարաբերությունների նեղ շրջանակը, ոչ հիմնական գործառույթի «կապվածությունը» որևէ հիմնական կամ մի քանի հիմնական գործառույթների հետ:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **«Իրավունքի իրավաբանական գործառույթների համակարգը»** վերնագրով, բաղկացած է երկու ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Իրավունքի հիմնական (հատուկ) իրավաբանական գործառույթները»** վերնագրով, համակողմանի քննարկվում են իրավունքի հիմնական (հատուկ) գործառույթների բովանդակությունը և առանձնահատկությունները:

Իրավունքի գործառույթների համակարգը բարդ, բազմաշերտ, հիերարխիկ փոխկապակցված, փոխպայմանավորված և փոխներգործող միասնական, ամբողջական կառուցվածքային միավոր է: Իրավունքի գործառույթների համակարգում որպես հիմնարար ուղղություն՝ դիտարկվում է իրավունքի ընդհանուր սոցիալական գործառույթը, որն արտահայտում է առավել նեղ համակարգի (իրավունք) ներգրավվածությունն այլ՝ առավել բարդ համակարգի (հասարակություն) մեջ: Իրավունքի գործառույթները սերտորեն փոխգործակցում են միմյանց հետ, և իրենց միասնության մեջ ներկայանում են որպես առավել բարդ համակարգ: Թերևս հնարավոր է իրավունքի գործառույթները հետազոտել առանձին-առանձին: Սակայն իրավունքի սոցիալական էության բացահայտման համար սկզբունքային դերակատարություն ունի նաև դրանց համակարգային վերլուծությունը:

Հեղինակի կարծիքով, կարելի է առանձնացնել իրավունքի գործառույթների դասակարգման հետևյալ մոդելը.

1. հատուկ իրավաբանական գործառույթներ,
2. օժանդակ իրավաբանական գործառույթներ:

Հատուկ իրավաբանական գործառույթներն այլ կերպ անվանվում են նաև հիմնական, բխում են իրավունքի համակարգից, մարդկանց վարքագծի վրա վերջինիս ներգործության ձևերից և իրավունքի իրացման ձևերի յուրահատկությունից. Իրավունքի գործառույթների անբաժան կապն իրավունքի

էությունից պայմանավորում է հատուկ իրավաբանական գործառույթների գոյության անհրաժեշտությունը, որոնք ընդունված է անվանել *կարգավորիչ և պաշտպանիչ:*

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Իրավունքի օժանդակ (ոչ հիմնական) գործառույթները» վերտառությամբ ի տարբերություն իրավունքի ու հիմնական (հատուկ) իրավաբանական գործառույթների, որոնք աչքի են ընկնում իրենց առաջնային սոցիալ-իրավական նշանակությամբ, իրավունքի օժանդակ իրավաբանական գործառույթները, ամենևին էլ չկորցնելով իրենց որոշակի սոցիալ-իրավական նշանակությունը, այդուհանդերձ՝ առաջինների հետ համեմատած, կատարում են ածանցյալ, երկրորդական, օժանդակ դերակատարում իրավահարաբերությունների կարգավորման, իրավակարգի ամրապնդման և օրինակարգի պահպանման խնդրում:

Իրավունքի օժանդակ իրավաբանական գործառույթների թվին կարելի է դասել՝ փոխհատուցային, վերականգնողական, սահմանափակիչ (սահմանափակող) գործառույթները:

Ատենախոսական հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը մշակել է հետևյալ **եզրակացությունները.**

1. Իրավունքի գործառույթի իրացումը որպես իրավունքի սոցիալական նշանակության գործընթաց: Իրավունքի զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ այն ստեղծվում է նրա համար, որ գործի, իրականացնի հասարակական հարաբերությունների վրա ոչ թե քաոսային, անտարբեր կամ աննպատակ, այլ կարգավորված, նպատակաուղղված ազդեցություն և ամենից առաջ ելնելով համասոցիալական շահերից: Միայն վերջին տասնամյակում ժողովրդավարական երկրներում իրավունքը սկսել է գործել ի շահ մարդու և հասարակության: Դա հնարավոր դարձավ, երբ իրավունքը դասակարգային գործիքից վերածվեց ժողովրդավարական հասարակության գործիքի:

2. Իրավունքը որպես նյութական, հոգևոր և այլ պահանջների, տարբեր շահերի բավարարման ու հասարակական զարգացման արդյունք և հասարակության պետական կամքի նորմատիվ արտահայտում՝ ունենում է վերջինիս վրա ակտիվ հակադարձ ազդեցություն: Այն իրականացվում է իրավունքի կողմից իր գործառույթների իրականացման միջոցով: Սակայն իրավունքի գործառույթները և իրավունքի ազդեցությունը, չնայած հարակից են,

սակայն նույնական հասկացություններ չեն:

3. Իրավունքի սոցիալական կարգավորման համակարգում գործադրման համար պետք է իրականացնի ոչ թե մեկ, այլ մի քանի գործառույթներ, քանի որ այն չի կարող ներառվել օբյեկտիվորեն անհրաժեշտ բազմակողմ կապերի մեջ վերջինի հետ միայն որևէ մեկ որակով: Իրավագիտակցության, բարոյականության, քաղաքականության և այլնի հետ փոխազդեցության համար պահանջվում է նաև իրավունքի որոշակի ազդեցություններ, որոնք առավել հստակորեն ապահովում են համապատասխան գործառույթներով (դաստիարակչական, քաղաքական և այլն), և որը չի կարող ընդգրկվել իրավունքի միայն մեկ գործառույթով:

4. Իրավունքի էության, բովանդակության և սոցիալական նշանակության բացահայտման համար կարևորվում է իրավունքի գործառույթների դասակարգման խնդիրը, որը պայմանավորված է մի շարք չափանիշներով.

ա) Ըստ իրավունքի էության հետ կապված՝ տարբերակվում են գործառույթներ, որոնք ներհատուկ են իրավունքի բնությանը, նրա անբաժան բնութագրիչներն են և գործառույթներ, որոնց առաջացումը պայմանավորված է ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգային-մշակութային, կրոնական և այլ գործոններով:

բ) Ըստ կարևորության աստիճանի՝ տարբերակվում են հիմնական (հատուկ) և երկրորդային (ածանցյալ) գործառույթներ: Առաջինին վերաբերում են իրավունքի ներհատուկ գործառույթները, իսկ երկրորդայինին (ածանցյալ) գործառույթները ոչ էական են և պայմանավորված են տվյալ ընթացիկ խնդիրների լուծումով (օրինակ՝ գործառույթը և այլն):

գ) Ըստ համակարգվածության աստիճանի տարբերվում են <u>համակարգակազմող</u> և <u>կոնկրետացնող:</u> Համակարգակազմող գործառույթները ներհատուկ են իրավունքի էությանը, իսկ կոնկրետացնող գործառույթները երկրորդային, ածանցյալ են իրենց էությամբ:

դ) Ըստ գործողության ուղղությունների, տարբերակվում են <u>ինքնավերարտադրող</u> և <u>օժանդակող</u> գործառույթներ: Ինքնավերարտադրող գործառույթները իրավունքի էությանը ներհատուկ գործառույթներն են, իսկ օժանդակողները՝ երկրորդային (ածանցյալ) գործառույթներն են:

5. Իրավունքի ընդհանուր տեսության առումով առավել ճշգրիտ անհրաժեշտ

է խոսել իրավունքի հիմնական գործառույթների վերաբերյալ, քանի որ գոյություն ունեն նաև հասարակական հարաբերությունների վրա իրավունքի ազդեցության այնպիսի ուղղություններ, որոնց չեն ներառում մեր կողմից նշված հատկանիշները, այսինքն դրանք կողմնորոշված չեն իրավունքի առջև ծառացած գլխավոր, արմատական խնդիրների իրականացմանը, ի սկզանե չեն սահմանվում իրավունքի սոցիալական նշանակությամբ, չունեն էական բնույթ, չեն տիրապետում համընդհանրության հատկանիշով և այլն:

6. Իրավունքի հիմնական գործառույթներ անհրաժեշտ է համարել այնպիսի գործունեության ուղղություններ, որոնք բխում են վերջինիս էությունից, հանդիսանում են իրավունքի սոցիալական նշանակության արտահայտում, համապատասխանում դրա գլխավոր, արմատական խնդիրներին և որոնք բնորոշ են վերջինին դրա զարգացման և գոյության ամբողջ ժամանակաշրջանում, այսինքն օժտված են մշտական, կայուն և դինամիկ զարգացման հատկանիշներով:

7. Անհրաժեշտ է նշել որոշակի հատկանիշներ, որոնք բնութագրում են իրավունքի գործառույթները որպես սոցիալական նշանակությամբ սահմանվող հասարակական հարաբերությունների վրա դրա ազդեցության հիմնական ուղղություններ.

- իրավունքի գործառույթները բխում են դրա էությունից և սահմանվում հասարակությունում վերջինիս զարգացման որոշակի փուլում իրավունքի սոցիալական նշանակությամբ,
- այն ներկայացնում է իրավունքի ակտիվ ներգործությունը հասարակական հարաբերությունների որոշակի ձևի վրա,
- իրավունքի գործառույթները՝ հասարակական հարաբերությունների վրա ազդեցության այնպիսի ուղղություն է, որոնց իրականացման պահանջը ծնում է իրավունքի որպես սոցիալական երևույթի գոյության անհրաժեշտությունը: Այս իմաստով կարելի է ասել, որ գործառույթը բնութագրում է իրավունքի պարտադիր, անհրաժեշտ ազդեցության ուղղությունը, այսինքն այնպիսին, առանց որի հասարակական հարաբերությունների իրավակարգավորումը անհնարին կլինի:
- գործառույթը արտահայտում է իրավունքի առավել էական, գլխավոր գծերը, բխում դրա բնույթից և կողմնորոշված է իրավունքի առջև իր զարգացման

տվյալ փուլում ծառացած վերջնական խնդիրների իրականացմանը:

8. Իրավունքի գործառույթների գործադրման՝ իրավունքի առջև ծառացած նպատակների (խնդիրների) ձեռք բերումն է առավել արագ և ռացիոնալ ուղիներով և միջոցներով: Այն (արդյունավետությունը) մեծամասամբ կախված է իրավական համակարգի հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակին համապատասխանությանն աստիճանից: Այդ համապատաս-խանությունը ձեռք է բերվում, առաջինը, հասարակական հարաբերությունների զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների գիտական իմացությամբ, երկրորդը, այն իրավական ձևերի և մեթոդների ճիշտ սահմանմամբ, որոնք տվյալ փուլում կապահովեն օպտիմալ արդյունք, երրորդը, օրենսդրական գործունեության ակտիվությամբ, որը օբյեկտիվ պահանջների, գիտական եզրակացությունների, պրակտիկայի ընդհանրացման հիման վրա ժամանակին կներածի փոփոխություններ, կկատարելագործի օրենսդրությունը, կապահովի պետական ապարատի գործունեության բարելավումը:

9. Հետազոտության արդյունքները թույլ են տալիս խոսելու նաև իրավունքի համակարգակազմող գործառույթների մասին: Այս առումով, անհրաժեշտ է ընդգծել, որ իրավունքի համակարգակազմող գործառույթները իրավունքի էությանը և բովանդակությանը ներհատուկ, բնորոշ հատկանիշներ են: Այդ գործառույթներից է <u>իրավակազմավորող</u> (իրավաստեղծ) գործառույթը, որն իրենից ներկայացնում է երեք գործառույթների միասնական ամբողջություն.

1) հասարակական հարաբերություններին իրավական բնույթ հաղորդելը, այսինքն՝ պաշտոնապես ճանաչել այդ հարաբերությունները որպես իրավական,

2) կոնկրետ իրավունքներ և պարտականություններ առաջացնող,

3) որպես ինքնավերարտադրող իրավունք՝ կոնկրետ հասարակական հարաբերություններում կամ իրավակիրառ գործունեության ոլորտում հանդես է գալիս որպես ընդհանրական իրավադրույթ (օրինակ՝ դատական նախադեպ, իրավական դիրքորոշում և այլն):

Համակարգակազմող գործառույթներից է՝ կանոնակարգման գործառույթը, որն արտահայտվում է հետևյալ գործընթացներով՝ կազմակերպման, կարգավորման, կառավարման, հետևողական ընթացակարգերով (խաղի կանոններ, կանոնակարգ, գործողությունների հետևողական իրականացում և այլն), փաստաթղթավորում, համակարգում և այլն:

10. Անհրաժեշտ է ընդգծել, որ եթե իրավակազմավորող գործառույթը, առաջին հերթին, կապված է իրավունքի վերարտադրման հետ, ապա կանոնակարգման գործառույթը կապված է հասարակական հարաբերությունները, իրավական պրակտիկան օժանդակելու հետ:

Համակարգակազմող գործառույթների բացահայտումը կարելի է դիտարկել որպես իրավունքի համապարփակ բնութագրիչներ, որոնք արտահայտում են իրավունքի էությունը, բովանդակությունը և սոցիալական նշանակությունը:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մենագրություն. «Իրավունքի իրավաբանական գործառույթների համակարգը»: Երևան, 2016, 102 էջ:

2. Մենագրություն. «Իրավունքի գործառույթները և դրանց դասակարգումը»: Երևան, 2016, 103 էջ:

3. Возникновение и развитие учений о функциях права //Փիլիսոփայությունը արդի աշխարհում. UNESCO-ի փիլիսոփայության միջազգային օրվա կապակցությամբ գիտաժողովի նյութեր: ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ: Երևան 2014, էջ 242-253:

4. Իրավունքի գործառույթները և դրանց առանձնահատկությունները //Փիլիսոփայությունը արդի աշխարհում. UNESCO-ի փիլիսոփայության միջազգային օրվա կապակցությամբ գիտաժողովի նյութեր: Գիրք VI, 17 նոյեմբերի 2016թ., էջ 267-278:

5. Функции права: их сущность, содержание классификации // Կաճառ գիտական տարեգիրք: Երևան, 2016, էջ 145-148:

Баласанян Хачатур Самвелович

Функции права в демократическом, правовом государстве: теоретико - правовой анализ

Резюме

Актуальность исследования темы данной диссертационной работы обусловлена повышением эффективности правового регулирования общественных отношений. Актуальность комплексного и всестороннего исследования функций права обусловлена также содержательностью и важностью права и его функций. Цель диссертационной работы: на основе достижений современной юриспруденции и анализа правовой практики осуществить всестороннее исследование для выявления сущности и содержания функций права. Проблему функций права автор относит к числу центральных и основополагающих для современной теории права.

В диссертационной работу на основе имеющихся научных трудов Армении и России предпринята попытка проанализировать современное состояние теории функций права на основе применения постклассической научной методологии. Автор диссертации подчеркивает перспективность использования конструктивизма и антропоцентризма для научного анализа функций права.

Научная новизна настоящей диссертационной работы заключается в том, что автор подверг всестороннему и систематическому анализу сущность, содержание, особенности функций права; обосновал критерии их научной классификации, теоретическое и практическое значение такой классификации в вопросе повышения эффективности правопорядка. В связи с этим автор раскрыл смысл и содержание, социальную значимость правовых функций. В работе автор раскрывает теоретико-правовые и методологические аспекты функции права, выделяет проблемы реализации функций права в демократическом обществе; предлагает новые научные критерии деления функций права на виды;

обосновывает социальную значимость функции права на современном этапе развития правовой системы Армении.

Теоретическая значимость диссертационной работы заключается в том, что результаты исследования могут быть использованы в дальнейших научных исследованиях в области теории права.

Практическая значимость работы заключается в том, что разработанные автором заключения, выводы и рекомендации могут быть использованы сотрудниками правотворческих и правоприменительных органов, а также в учебных целях.

Работа состоит из введения, трех глав, объединяющих семь параграфов, заключения и списка использованной литературы.

Balasanyan Khachatur

Functions of the right in the democratic, constitutional state: theoretical - legal analysis

Summary

The relevance of a research of a subject of this dissertation work is caused by increase in efficiency of legal regulation of the public relations.

The relevance of a complex and comprehensive investigation of functions of the right is caused also by pithiness and importance of the right and its functions.

The purpose of dissertation work on the basis of achievements of modern law and the analysis of legal practice is to conduct a systematic research for identification of essence and content of functions of the right.

The dissertation work attempts to analyze the theory of functions of law by applying post-classical scientist methodology. The author emphasizes the using constructivism and anthropocentrism to the scientific analysis of the function of law. Options rights are regarded as artificially created by scientists construct. It raised the question of the role of the legal entity in the implementation of the functions of law.

Scientific novelty of this dissertation work is that the author has subjected the comprehensive and systematic analysis essence, contents, features of functions of the right, has proved criteria of their scientific classification both theoretical and practical value of such classification in a question of increase in efficiency of law and order.

In this regard author:

Has revealed sense and contents, the social importance of legal functions,

On the basis of classification of functions of the right has put his own standards and approaches,

From the point of view of cost has estimated a role and value of the main and not main functions in questions of increase in efficiency of law and order, preservation of right legality and strengthening of law and order.

Elements of scientific novelty contain also in the basic provisions presented to protection.

The theoretical importance of dissertation work is that results of a research can be used in further researches.

The practical importance of work is that the conclusions developed by the author, recommendations can be used from the staff of law-making and law-enforcement agencies, and also in the educational purposes.